https://doi.org/10.46991/S&L/2020.88.086

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սևակ Պողոսյան
Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Կազմակերպիչ է համարվում այն անձը, ով կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը կամ ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք»:

Հանցանքի կատարումը կազմակերպել ասելով՝ նկատի է առնվում պլանների մշակումը, հանցակիցներ որոնելը, հավաքագրելը, նրանց մեջ հանցագործությանը մասնակցելու ցանկություն առաջացնելը, նրանց միջև դերերը բաշխելը, գործիք կամ միջոց տրամադրելը, նյութատեխնիկական ապահովումը, անվտանգության միջոցներ ձեռնարկելը՝ հանցագործությունը պարտակելու հետ կապված և այլն:

Հանցանքի կատարումը ղեկավարելը, որպես կանոն, դրսևորվում է հանցանքի կատարման վայրում, հանցագործության ընթացքում հանցակիցների գործողությունները համակարգելով, նրանց ցուցումներ տալով: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, անձը, ով ղեկավարում է հանցանքի կատարումը, կարող է անձամբ ներկա չգտնվել դեպքի վայրում, այլ կառավարումն իրականացնել միանգամայն այլ վայրից, այդ թվում՝ այլ երկրից՝ կապի տարբեր միջոցներով[1]:

Ինչ վերաբերում է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծած կամ ղեկավարած անձի արարքի որակմանը, ապա պետք է նշել, որ այն, ըստ էության, համարվում է հանցանքի կատարում:

ՀՀ քր. օր.-ի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտավորության մեջ: Այդ իսկ պատճառով ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցավոր միավորումներ ստեղծած կամ ղեկավարած անձը պատասխանատվության է ենթակա որպես կատարող, և վերջինիս արարքը որակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում:

Միևնույն ժամանակ, եթե անձի կողմից հանցավոր խումբ ստեղծելը կամ ղեկավարելը որպես ինքնուրույն հանցագործություն նախատեսված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասում, և այդ խումբը դեռևս չի հասցրել այլ հանցանք կատարել, ապա նշված խումբը ստեղծած կամ ղեկավարած անձը, ինչպես արդեն նշել ենք, ենթակա է պատասխանատվության համապատասխան հանցագործության նախապատրաստության համար. այս դեպքում նույնպես օրենսգրքի 38-րդ հոդվածի վրա հղում չի կատարվում:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար / խմբագրությամբ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ. Ս. Ղազինայանի/, էջ 269-270:

Վերոգրյալը թույլ է տալիս հավաստելու, որ կազմակերպված խումբ կա՛մ հանցավոր համագործակցություն ստեղծելը կա՛մ դրանք ղեկավարելը ոչ թե կազմակերպիչին, այլ հանցանք կատարողին բնորոշ հատականիշներ են: Իզուր չէ, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ դրանք ղեկավարելը նախատեսված չէ որպես կազմակերպիչին բնութագրող արարք:

Կազմակերպիչի արարքների բնույթի և բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս ասելու, որ նա, ըստ էության, կամ միաժամանակ հանցագործության դրդիչի և օժանդակողի գործառույթներ է իրականացնում, կամ էլ միայն օժանդակողի, որովհետև այլ անձին հանցանքի կատարման դրդելը կազմակերպիչի գործունեության անբաժան մասը չէ. կազմակերպիչը կարող է նաև ինքը չդրդրել հանցագործության[1]: Միևնույն ժամանակ քրեական իրավունքի տեսության մեջ նշվում է, որ, եթե անձը, բացի մեկ ուրիշին հանցանքի կատարման դրդելուց, նաև օժանդակում է նրան, կազմակերպական բնույթի գործունեություն է իրականացնում, ապա նա հանդիսանում է ոչ թե դրդիչ, այլ կազմակերպիչ[2]: Նշվում է նաև, որ միայն դրդիչի և օժանդակողի գործառույթները համատեղելը դեռևս բավարար չէ անձին կազմակերպիչ ճանաչելու համար. անհրաժեշտ է նաև, որ նա առնվազն երկու անձի միավորի իրար, կոորդինացնի կամ ծրագրի նրանց արարքները[3]: Սրա հետ կապված՝ հարկ ենք համարում քննարկել կազմակերպիչի դերակատարումը առանձնացնելու նպատակահարմարության հարցը: Բանն այն է, որ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների մեծ մասում կազմակերպիչի ինստիտուտը բացակայում է. խոսվում է միայն դրդիչի և օժանդակողի մասին[4]: Քրեական իրավունքի տեսության մեջ այն կարծիքն է արտահայտվել, որ կազմակերպիչի գործողությունները տարբերվում են թե՛ դրդիչի, թե՛ օժանդակողի գործողություններից. դրանք իրենց բնույթով առավել նշանակալից են, քանի որ եթե դրդիչը «հակում է», օժանդակողը «օգնում է», ապա, ի տարբերություն նրանց, կազմակերպիչը «կազմակերպում» կամ «ղեկավարում է»[5]: Հարց է առաջանում, թե ինչպես է կազմակերպիչը կազմակերպում կամ ղեկավարում: Դրանց բովանդակությունն արդեն բացահայտել ենք և նշել, որ ըստ էության դրանք դրդիչի և օժանդակողի արարքներ են: Եվ իրոք, ենթադրենք կազմակերպչական գործողությունները կատարվում են ցուցումներ, խորհուրդներ տալով: Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ ապագա հանցագործության տեղի, ժամանակի, գործիքների ու միջոցների, եղանակի, ապագա զոհի, հանցակիցների միջև դերերի բաշխման մասին ցուցումների ամբողջություն: Նկատի ունենանք նաև այն, որ մեր կարծիքով, օժանդակողի արարքների սպառիչ ցանկ տալը արդարացված չէ (այդ մասին կխոսենք հետագայում): Եթե հանցագործությանը ցանկացած ձևով նպաստելը օժանդակություն է, ապա, ասենք, կատարողներ հավաքագրելը կամ դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը նախապատրաստություն է, եթե հավաքագրողը կբռնվի այդ պահին, կա՛մ հանցափորձ, եթե անձը կբռնվի հանցանքը կատարելու ընթացքում, կա՛մ դրդչություն, եթե կբռնվի դրանից հետո: Ընդհանրացնելով կարող ենք հավաստել, որ կազմակերպիչի ինստիտուտն առանձնացնելը ավելորդ է թվում: Այն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան լուծում է դրանք: Մասնավորապես, հաճախ դրդիչին ու կազմակերպիչին շփոթում են,

---

[1] Տե՛ս Васюков В. В. Նշված աշխ., էջ 5:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք (Ընդհանուր մաս), դասագիրք բուհերի համար / խմբագրությամբ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ. Ս. Ղազինայանի/, էջ 271:

[3] Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 6, СПб, 2007, էջ 166:

[4] Տե՛ս Уголовное законодательство зарубежных стран(Англии, США, Франции, Германии, Японии)., М., 1999:

[5] Տե՛ս Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. Н. И. Кропачева, Б В. Волженкина, В. В. Орехова. էջ 590:

հատկապես երբ նույն անձը կատարում է և՛ դրդիչի, և՛ օժանդակողի գործառույթներ: Որոշ դեպքերում կազմակերպչին և օժանդակողին են նույնացնում, ավելի ճիշտ՝ միևնույն անձին համարում են և՛ կազմակերպիչ և՛ օժանդակող[1]: Մեկ այլ դեպքում անձի արարքը որակվել է որպես հանցանքի կազմակերպում՝ նշելով, որ նա օժանդակել է հանցագործությանը[2]: Կարծում ենք, որ այն դեպքերում, երբ անձը և՛ դրդում է, և՛ օժանդակում է հանցագործությանը, նրա արարքը պետք է որակել Հատուկ մասի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով 38 հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերի վրա, իսկ եթե արարքը սահմանափակվել է զուտ հանցանք կատարելու դիտավորություն, ցանկություն առաջացնելով կամ հանցագործությանը որևէ ձևով նպաստելով, ապա արարքը պետք է որակել Հատուկ մասի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով 38 հոդվածի միայն չորրորդ կամ միայն հինգերորդ մասի վրա: Ընդ որում, զուտ լեզվատեխնիկական ապահովման տեսանկյունից ճիշտ կլինի սկզբում նշել Հատուկ մասի հոդվածը: Այսպես, եթե տեղի է ունեցել հասարակ սպանության դրդչություն և օժանդակություն, ապա արարքը պետք է որակել հետևյալ կերպ՝ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս–38 հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր: Այս դեպքում պարզ կլինի, որ անձը իրականացրել է հասարակ սպանության դրդչություն և օժանդակություն: Իմիջիայլոց, մեր կողմից ուսումնասիրված 100-ից ավելի քրեական գործերից և ոչ մեկում, 38 հոդվածի վրա հղում կատարելուց բացի, դրա կոնկրետ մասը չէր նշվում՝ անորոշ թողնելով այն հարցը, թե տվյալ անձը ինչ դեր է կատարել հանցագործության մեջ: Կարծում ենք, որ բացի հոդվածը նշելուց, պետք է հղում կատարվի նաև դրա մասի կամ մասերի վրա:

Մեր կարծիքով՝ առաջարկվող նորամուծությունները կարող են նպաստել քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի կատարելագործմանը:

THE ISSUES OF THE CONCEPT AND CRIMINAL LIABILITY OF THE ORGANIZER OF THE CRIME

Sevak Poghosyan
Deputy Prosecutor of Erebuni and Nubarashen Administrative Districts,
PHD Applicant of the YSU Chair of Criminal Law at the Faculty of Law

The article discusses the functions of a crime organizer, the nature and content of the actions taken. The author concludes that the separation of the organizer's institute is not expedient. The organizer either performs the functions of an instigator or a facilitator or combines them. Therefore, in cases where a person carries out the actions of an instigator and a facilitator, when qualifying his action, in addition to reference to Article 38, reference should also be made to part 4 and 5 of that Article. If it unites two or more persons, then, when caught at that moment, the act should be described as a preparation for a deliberate crime, however, when caught during or after the crime, it should be described as an incitement. The mentioned innovations, in the author's opinion, can contribute to the improvement of criminal law theory and practice.

[1] Տե՛ս քրեական գործ N ՇԴ2/007/01/07:
[2] Տե՛ս քրեական գործ N ՇԴ2/0002/01/19:

ПРОБЛЕМЫ ПОНЯТИЯ И ОТВЕТСТВЕННОСТИ ОРГАНИЗАТОРА ПРЕСТУПЛЕНИЯ

Севак Погосян
Заместитель прокурора административных округов Эребуни и Нубарашен, соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

В статье рассматриваются функции организатора преступления, характер и содержание осуществляемых действий. Автор приходит к выводу о нецелесообразности выделения института организатора. Организатор выполняет функции либо мотиватора либо фасилитатора либо совмещает их. Следовательно, в случаях, когда лицо выполняет действия пособника или фасилитатора, при квалификации своего действия, помимо ссылки на статью 38, следует также сделать ссылку на параграфы 4 и 5 этой статьи. Если она объединяет двух или более лиц, то в момент, когда его поймали, деяние следует классифицировать как подготовку к умышленному преступлению, а когда его поймали во время или после преступления, то как подстрекательство.

Эти нововведения, по мнению автора, могут способствовать совершенствованию теории и практики уголовного права.

Բանալի բառեր – կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող, հանցավոր համագործակցություն, կազմակերպված խումբ, հանցագործության նախապատրաստություն, հանցափորձ

Ключевые слова- организатор, подстрекатель, пособник, преступное сотрудничество, организованная группа, приготовление к преступлению, покушение на преступление.

Key words- organizer, instigator, facilitator, criminal cooperation, organized group, crime preparation, attempted crime